Կապսի ջրամբար

Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994 թվականին. իրականացվել է միայն 20մ բարձրությամբ պատվարի մարմնի լիցք: Կիսաավարտ պատվարը ներկայումս իրենից վտանգ է ներկայացնում, քանի որ թունելի փլուզման, կամ մեծ վարարման դեպքում կիսակառույց ջրամբարում արտահոսք կլինի պատվարի վրայով՝ ճեղքելով պատվար: Դա մեծ վնասներ կհասցնի պատվարի ստորին բիեֆում գտնվող համայնքներին, այդ թվում կծածկի Գյումրի քաղաքի մի մասը:

1-ին փուլով նախատեսվում է կառուցել ընդգհանուր 25 մլն մ^3 ծավալով ջրամբար, որը կբարձրացնի Շիրակի և Ախուրյանի Աջափնյա ջրանցքների իշխման տակ գտնվող շուրջ 12325հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով տարեկան կխնայվի 1.3 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա:

Ներկայումս ընթանում են Կապսի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները, որոնք կավարտվեն 2018 թվականի հունվարին, որից հետո կսկսվի շինարարական մրցութային գործընթաց: Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2018 թվականին մրցութային գործընթացի ավարտից հետո՝ շուրջ 3 տարի տևողությամբ:

Կապսի ջրամբարի կառուցման ծրագիրը ֆինանսավորվելու է Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KFW) վարկային միջոցներով և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ:

Վարկային համաձայնագիրը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել և ստորագրվել 2014 թվականի դեկտեմբերի 19-ին, որից հետո, անցնելով համաձայնագրի ներպետական համաձայնեցման ընթացակարգ, ուժի մեջ է մտել 2015 թվականի հունիսի 29-ին: